ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՎԱՆԱՁՈՐԻ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՄԲԻՈՆ Հայոց լեզվի և գրականության

ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԾՐԱԳԻՐ

Բանասիրության բակալավրի

Մասնագիտություն/ուղղություն Հայոց լեզու և գրականություն
Որակավորումը Բանասիրության բակալավր
Ֆակուլտետ Հումանիտար գիտությունների
Ուսուցման ձև առկա ուսուցման 7-րդ կիսամյակ, հեռակա ուսուցման 9-րդ կիսամյակ
(առկա, հեռակա)

Հաստատված է ամբիոնի նիստում

(արձանագրություն 9, 27.12.2021թ.)

Ամբիոնի վարիչ՝ Հ. Բաբուռյան

Հաստատված է Հումանիտար գիտությունների ֆակուլտետի

ուսումնամեթոդական խորհրդի նիստում

(արձանագրություն 7, 26.01.2022 թ.)

Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան՝ Մ. Բրուտյան

Կազմող(ներ)՝ բ.գ.դ., պրոֆ. Գ. Խաչատրյան
բ.գ.թ., դոցենտ Վ. Փիլոյան
՝ բ.գ.թ., դոցենտ Հ. Հարությունյան

Բանասիրության բակալավրի արտադրական պրակտիկա

1. **Պրակտիկայի նպատակը**

1.1. ապագա բանասիրության բակալավրին ծանոթացնել բանասիրական գործունեության տարբեր բնագավառներին, ապագա մասնագիտական գործունեության յուրահատկություններին,

1.2. բուհական դասընթացների սահմաններում ուսանողների ձեռք բերած տեսական գիտելիքները գործնականում կիրառելու հմտության ձևավորում,

1.3. ուսանողների ինքնուրույն գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծում,

1.4. գործնականում ուսանողների կողմից դասագրքերի, ծրագրերի և ուսումնաօժանդակ նյութերի ստեղծագործաբար օգտագործելու հմտության ձևավորում:

2. **Պրակտիկայի խնդիրները**

2.1. ուսանողներին սովորեցնել ճիշտ կողմնորոշվել բանասիրական դասընթացների մեթոդաբանության մեջ,

2.2. զարգացնել ուսանողների ինքնուրույն մտածելու և ստեղծագործելու ունակությունները,

2.3. ուսանողներին հաղորդակից դարձնել բանասիրության ժամանակակից մեթոդներին, զարգացնել դրանք ավանդական մեթոդների հետ հմտորեն համակցելու ունակություն:

3. **<u>Պրակտիկայի հաստատությունը, վայրը</u>**

ՀՀ, Լոռու մարզ, ՎՊՀ գրադարան, թերթի խմբագրություն, հեռուստաընկերություն, գյուղ:

4. **<u>Պրակտիկայի ընթացակարգը</u>**

4-րդ կուրս, 7-րդ կիսամյակ, 4 շաբաթ

5-րդ կուրս, 9-րդ կիսամյակ, 4 շաբաթ

Պրակտիկայի ղեկավարը պարտավոր է.

<u>Ա.</u> Ուսումնասիրել արտադրական պրակտիկայի ծրագիրը, նախանշել անելիքները:

- Պրակտիկան սկսվելուց երկու շաբաթ առաջ ուսումնասիրել պրակտիկայի անցկացման ժամանակացույցը, նրա համապատասխանությունը թեմատիկ պլաններին, չափորոշչին, պրակտիկայի ծրագրի բովանդակությանը:
- Նշված վայրերի առնչությամբ պատկերացում կազմել բանասիրական բնույթի գործունեության և աշխատանքի մասին:
- Մասնակցել արտադրական պրակտիկայի կոնֆերանսին, ուսանողներին ծանոթացնել պրակտիկայի ծրագրին, պրակտիկանտի պարտականություններին և իրավունքներին, օրագրի վարման կարգին:

- Լրացնել օրագրի «Պրակտիկայի նպատակը» էջի համապատասխան տողերը, օգնել պրակտիկանտին ներկայացնելու պրակտիկայի անհատական պլանը օրագրի «Անհատական պլան» բաժնում:

Բ. Նախապես կազմած օրացուցային պլանի համաձայն՝ իրականացնել հետևյալ աշխատանքները.

- Ուսանող-պրակտիկանտներին նախապատրաստել բանասիրական գործունեության ոլորտներում աշխատանքին: Իրականացնել բանասիրական բնույթի գործունեություն [բարբառագիտական և բանահյուսական բնույթի աշխատանքներ, վիմագիր արձանագրությունների գրառում և ուսումնասիրություն, աշխատանք գրողների տուն-թանգարաններում, ՀՀ ԳԱԱ ինստիտուտներում, գրականության, արվեստի, գավառագիտական թանգարաններում, գրադարաններում, *մարզի զանգվածային լրատվության խմբագրություններում («Լոռու մարզ», «Երկունք», «Վանաձորյան խճանկար» պարբերականներ, «Լոռի», «Ֆորտունա» հեռուստաընկերություններ,* խմբագրություններ), քննարկել դրանք:
- Հետևել պրակտիկանտի կողմից պրակտիկայի օրագրի՝ ժամանակին ու մեթոդապես ճիշտ վարմանը և պատասխանատվություն կրել դրա համար:
- Ղեկավարել առարկայական միջոցառումների կազմակերպական աշխատանքները:
  - Պրակտիկայի անցկացման վայրի աշխատակից ղեկավարի հետ միասին հետևել պրակտիկանտների հաճախմանը, ուսանողների բացակայության դեպքում տվյալները ներկայացնել դեկանատ և/կամ պրակտիկայի բաժին:
  - Կազմել պրակտիկայի ծրագիր-պլան և յուրաքանչյուր շաբաթվա առաջին օրը հաստատել արձանագրությամբ:
  - Քննարկել ուսանող պրակտիկանտի կողմից իրականացված յուրաքանչյուր աշխատանք՝ նշելով դրական կողմերը, նկատված թերությունները:
  - Մասնակցել մյուս ղեկարվար(ներ)ի կազմակերպած քննարկումներին:

Պրակտիկայի նախապատրաստական փուլում՝

- ուսանողներին ծանոթացնել բանասիրական պրակտիկայի անցկացման մեթոդիկային,

- ուսանողներին ծանոթացնել պրակտիկայի ծրագրին ու համապատասխան մասնագիտական գրականությանը,

-կազմել ժամանակացույց և վերջինիս համաձայն՝ կազմակերպել աշխատանքը և այն վերլուծել ու քննարկել ուսանողների հետ:

Պրակտիկայի ընթացքում՝

- ղեկավարել ուսանողների աշխատանքը և քննարկել այն ուսանողների հետ՝ վեր հանելով թերություններն ու դրական կողմերը:

Պրակտիկայի ավարտից հետո՝

- գնահատել ուսանողի կատարած աշխատանքը տվյալ ոլորտ(ներ)ի ուղղությամբ, որտեղ արտահայտված կլինի ուսանողի ձեռք բերած կարողությունների և հմտությունների ձևավորման պատկերը,

-ընդհանրացնել ուսանողների կատարած աշխատանքը բանասիրական գործունեության շրջանակներում:

5. **Պրակտիկայի հաշվետու փաստաթղթերը**

Բոլոր տեսակի արտադրական պրակտիկաների համար նախատեսված է օրագիր: Կցել նաև խմբագրական-սրբագրական և բանահյուսական, բարբառագիտական բնույթի աշխատանքները հավաստող նյութեր:

6. **Պրակտիկայի գնահատումը**

Պրակտիկայի ղեկավարը պարտավոր է՝

- պրակտիկայի ավարտին օրագրում բնութագրել պրակտիկանտի կատարած աշխատանքը, գնահատել այն,
-դեկանատ ներկայացնել բոլոր ուսանողների՝ պրակտիկայի ծրագրով պահանջվող փաստաթղթերը պատշաճ վիճակով,
-մասնակցել պրակտիկայի պաշտպանությանը, պրակտիկանտների վերջնական գնահատականի ձևավորմանը,
-բազմագործոնային համակարգով ներկայացնել առավելագույնը 100 միավորի բաղադրիչները, գնահատման կարգը, ամփոփման կարգն ու ժամկետները, որոնք հիմնված են ՎՊՀ «Պրակտիկայի կանոնակարգ»-ի վրա:

Գահատման բաղադրիչները	Հատկացվող միավորը	Ում կողմից է գնահատվելու, ամփոփման կարգն ու ժամկետները
1. Հաճախելիություն	0-10	առարկայի մեթոդիստ / պրակտիկայի ընթ.
2. Առարկայական իմացություն	0-20	առարկայի մեթոդիստ
3. Իրականացրած գործունեության վերլուծություն • հավաքչական աշխատանք բարբառագիտությունից • հավաքչական աշխատանք բանահյուսությունից • խմբագրական և աղբյուրագիտական բնույթի աշխատանք • իրականացրած գործունեության արդյունքների համակարգում՝ հետազոտական հմտություններ	0-15 0-15 0-10 0-10	առարկայի մեթոդիստ / պրակտիկայի ընթացքում
Պաշտպանություն	0-20	Պրակտիկայի ղեկավար
Ընդհանուր միավորը	100	

Պրակտիկան գնահատվում է՝ ըստ սահմանված չափանիշների՝ բազմագործոնային համակարգով[a] պրակտիկայի ընթացքում ձեռք բերված կարողությունների, հմտությունների, կոմպետենցիաների հիման վրա:

Մասնակցության աստիճանը %	Հատկացվող միավորը

96-100/ 20 օր	20
91-95/ 19 օր	18
86-90/ 18 օր	16
81-85/ 17 օր	14
76-80/ 16 օր	10
71-75/ 15 օր	08
66-70/ 14 օր	00

7. Պրակտիկայի չափորոշիչ

Ուսանող-պրակտիկանտը պետք է ներկայացնի իր կողմից իրականացված աշխատանքների ժամանակացույցը, կարողանա լրացնել օրագիրը:

8. Պրակտիկայի բովանդակությունը

***Առաջին շաբաթ**, առաջին երկու օրերը – նախապատրաստական դասընթացներ,*

***Առաջին շաբաթ** – բանասիրական աշխատանք ՎՊՀ-ի գրադարանում, լեզվի, գրականության և ձեռագրերի ինստիտուտներում, տուն-թանգարաններում:*

***Երկրորդ շաբաթ** – «Ֆորտունա» հեռուստաընկերություն:*

***Երրորդ շաբաթ** – բանասիրական աշխատանք «Լոռու մարզ» թերթի խմբագրությունում:*

***Չորրորդ շաբաթ** – բարբառագիտական և բանահյուսական բաղադրիչի իրականացում Լոռու մարզի գյուղերից մեկում:*

Ուսանող-պրակտիկանտը կարող է ներկայացնել պրակտիկայից դուրս միջոցառումների անցկացման անհատական պլան-ժամանակացույց:

Պրակտիկայի պաշտպանությանը մասնակցում են պրակտիկայի ղեկավարը, ֆակուլտետի դեկանը, ամբիոնի վարիչը: